



32. ՇԵՐԵՄԸԴԻՆԱՆ

Կէլնի մեկ մարթ: Կուզեր կնիկ ընելը, լե չէր ուզեր հիսամի խում կաթ ծծող ախչիկ առնել:

Գլընաց մեկ լավ, խելոք մարթու՛մ քով: Խելոք մարթուն ուր ուզածն ասաց:

Խելոք մարթն ասաց. — Գլընա՛, եփ մեկ կին նոր երախա կը ծնի, մը թողնի ուր մոր կաթ ծծա: Փարա՛ տուր, տղղեն գընա՛, ա՛ռ, արի՛:

Գլընաց, մեկ կնիկըմ տղղա կը պիրեր, կանա՛վ ընտեղ մինչև տղղեն էպեր. տղղեն ախչիկ էր, փարա էտուր, առավ, էկավ:

Էպիր, պախեց, մեծցուց օխչըրի կաթով: Ախչիկ սորա վեր ուր կարգեց:

Էտա մարթ ամեն օր կերթեր նեճիր: Եփ օր կը գյեր տուն, խավկիթըմ կը տըներ պատի հանեճ նըշան, կը թա՛լեր էնոր:

Կընգան կասեր. — Ձըգնից կտրիճ մարթ կա՞ ախչըրի մեչ:

Կնիկ հախու շատ գայիճցավ: Մնկ օր մեկ հուրհուշ կնիկըմ էկավ էնոնց տուն մըսաճըր:

Ասաց. — Քուրի՛կ, ընչի՞ ես էտպես գայիճցե:

Ասաց. — Իմ մարթ ավչութնից օր կը տաննա, խավկիթ կը տընա նըշան, կը գանա: Ձիկ կասա՛ ձըգնից կտրիճ մարթ կա՞ ախչար: Ես էլ կը վախենամ, էտպես գայիճցեր եմ:

Էն մըսաճըր կին էնոր ասավ. — Թե անգամ մ՛էլ էտպես կասա, տու՛ն էլ ասա՛ Շերեմըճիման քյեգնից կտրիճ ա:

Մյուս օր էնոր մարթ ավչութնից կը գա՛, գինա՛ն նըշան կը տընա, կը գա՛նա խավկըթին, տա՛ռնա կասա. – Ձիգանից կտրի՛ծ կա՛:

Կնիկ էնոր ասաց. – Շերեմըժդինան քյեզնից կտրի՛ծ ա:

Մարթն էլ կէլնի, կասա. – Տ'երթամ էտոր տեսություն, տեսնեմ ինչպե՛ս մարթ ա:

Եփ օր կերթա, կը խասնի Շերեմըժդինանի գյեղի հա՛ռեճ, կը տեսնա, օր մեկ երիտասարթ տըղե մ' էն տեղ նըստուկ ա:

Էն տըղի ծեռ, ոտ գիւճու ծեռ, ոտաց պես խաստ ա:

Կը խառցընա էն տըղայից. – Տիւ ի՞նչ մարթ ես, էտ տեղ նըստեր ես:

Էն էլ կասա. – Ես Շերեմըժդինի լաճն եմ:

- Ապա ընչի՞ ես նըստի էտա տեղ:

- Ես գյընացի էն տեղ, ասլան պըռնեցի, ծեռներով ըսպա-նեցի, իմ ծեռ էղավ յարա. իմ խոր հախուն չըմ գյըխշընա էրթամ տուն: Ձի պան տ'ասա, թե՛ քյեզ խամար ամոթ չի՞, ասլան ի՞նչ էր, օր քիւ ծեռ յարալու ըներ:

Էտ խարցնող մարթուն սարսափ տարավ, թե էսա տըղան ա, օր էսպես ա, էտր խերն ի՞նչըխ ա:

Տըղային ասաց. – Էլի՛, էլի՛, քյե առնեմ, տանեմ ծեր տուն:

Տըղեն առավ, տարավ տիւս, տըղեն էթող տիւռ, ինքյ մտավ տուն:

Պա՛րև էտուր Շերեմըժդինանին: Շերեմըժդինան պա՛րև առավ:

Շերեմըժդինան ասաց. – Մըսաֆըր՛, հրամեցի՛ր, նըստիր:

Ասաց. – Չէ՛, մի խընտիրքյըմ կա, օր իմ խընտիրքյ կատարես, կը նըստիմ, չէ՛ չըմ նըստիր:

- Նըստի՛, ես քիւ խընտիրքյ կը կատարեմ:

Ասաց, թե. – Իմ խընտիրքյ էն ա, օր տըղան հընդունես, գա՛ տուն:

Շերեմըժդինան տըղին հընդունեց ներս:

Վերջին, էն մըսաֆըր ու Շերեմըժդինան էլան, գաճին էնոր ծիանքըյներու թա՛վլեն: Էն մարթ տեսավ, օր մեկ լավ ծի մ'ընտեղն ա. եփ օր էտա ծին Շերեմըժդինան տեսավ, էնպես թոռմավ, գաճիֆցավ, էղավ մուռտալ ծի՛մ:

Էլան, տիւս գաճին էն մարթ ու Շերեմըժդինան:

էն մարթ ասաց. – Ես անգամ մ'էլ տանճան թնայլեն, խեմ էն ծին ընչի՞ ընցկուն էղավ:

Տանցավ թնայլեն, տեսավ օր ծին հառաճին տեսակ լավ ծի մ' էղեր ա:

Տանցավ, էլնով տուս թնայլից:

Էն մարթ Շերեմըժդինանին ասաց. – Շերեմըժդինան, էսա ծին ընչի՞ էսպես կէղի:

Շերեմըժդինան ասաց. – Դե, թոխ տուր, էնպես պան ա, օր թե ասեմ, չըս ավատա:

Ասաց. – Շերեմըժդինան, խընտրիմ, օր ասես:

Ասաց. – Օր կը խընտրես, էն ծին իմ քուրն էր:

Ասաց. – Ապա ինչպե՞ս էղավ ծի:

Ասաց. – Մեկ օր իմ խեր խիվանդ էր: Ձի ասաց՝ գըննա սար, ծի խավըռծիլ պեր, ես խիվանդ եմ: Ես էլն, գանցի, իմ քուրն էլ էկավ խըն ծի խավըռծըլէ: Գանցիմք սար, հիրիկուն հուշացանք, չըկառցանք տաննենք տուն:

Մնացիմք մեկ ճիչ քարի՛մ տակ: Տուն էր էն քարի տակ:

Հիրիկուն մութն էտուր, ես, իմ քուրն նըստեր ենք էտա հերի մեչ, տեսնանք՝ հիրիկուն քանտուն դև էկան: Ես էլ, իմ քուր էլննք, պաղկըվանք էն մեկ քոչեն: Դներ նստան, խաց կերան:

Էտա դներու ճիչն ասաց. – Երանի թե Շերեմըժդինանի քուրն ըստեղն էլներ, ես առներ, պառկեր:

Եփ օր էսպես ասաց, իմ քուրոչ սիրտ փոխվավ:

Իմ քուր ասաց. – Ախպեր, ես ծարավ եմ:

Ասի. – Հա՛յ, քի՛ւր, ես ճուր հուստե՞ն պերեմ էսա հերի մեչ:

Ասաց. – Էղի, չէղի, տը պերես, թե չէ ես տը կանչեմ, ճուր ուզեմ էնա դևիրուց:

Ես էլ ճարահատ էղա, էլն, գանցի, քիչըմ ճուր գիղցա, պիրի, տվի իմ քուրոչ:

ճուր խմեց, դիր ասաց. – Ես անոթի եմ, ծի խաց պիտի:

Ասի. – Քի՛ւր, խաց ո՞ր տեղեն պերիմ, դներ կիմնան, մե կը սպանեն:

Ասաց. – Չէ՛, անկարելի ա, տը պերես, թե չէ դևիրուց կուզեմ:

Ես էլ ճարահատ էղա, էլն, դևիրուց խաց գիղցա, պիրի, տվի, կերավ:

Վերժըմ ասաց. – Ձի խազ կը գն, ես տը խազամ:

– Ախշի՛, մը՛ խազա՛, դևեր կակըխեն, մե կը պըռնեն, կը սպանեն, էնոնք քանսուն դև են, ես մինակ:

Չէղավ, ախշիկ խազաց:

Եփ օր խազաց, դևեր էլան, մե պըռնեցին:

Քանսուն դևեր էլան խըն ծի կռիվ: Էնոնք ծի տարան դեն, ես էնոնց տարա դեն: Վերճեն չըկարողացան ծի հաղթեն:

Իմ քուր ասաց. – Էնոր ճըկըթներ մալեքյ, օր կարողանաք Շերեմըժդինան հաղթեքյ:

Եփ օր իմ ճըկըներ մալեցին, ծի հաղթեցին, իմ քանակ տվին սան, ծի կապեցին սան ծիքյով:

Էն տեղ դևերու մեծն առավ իմ քուր, պառկավ:

Քիչ մընաց, դևեր քյընան, մեծն հիշար էր:

Ես էրի, էրի, էտա ծիքյ կըտրեցի, էլա՛, գացի, քյընուկ տեղեր տաս խատ դևու վիզ քանչեցի:

Էկա, իմ քանակ տըվի սան, օր դևերու ճիչ չըկիտնա, թե ես իմ ծիքյեր հարժըրեր եմ:

Դևերու ճիչ ծի ասավ. – Շերեմըժդինան, ես էրազըմ տեսա: Էրազի մեչ դևերու ճիչ առավ Շերեմըժդինանի քուր, պառկեր էր, ինոր քյեֆ կեներ:

Ես էլ ասի. – Ես էլ եմ էրազ տեսեր:

Դևերու մեծ ասաց. – Պատմա, քու էրազն ի՞նչ ա:

Ասի, թե. – Իմ էրազն էն էր՝ մեկ խավքյ մ'ինգեր էր մըչ քանսուն ճընջըղկու, տասի վիզ քանչեց, մնացին եռսուն:

Իմ քուր ասաց, թե. – Դևերու՛ ճիչ, չէրի՞ օր Շերեմըժդինան էլեր, քու ընգըռքյիրու վըզեր քանչեր:

Դև ասաց. – Չէ՛, չըկարար էլիր, էնպես ինքյ կապեր ծիքյերով:

Դև անգամ մ'էլ քյընավ: Ես էլա, տաս խատի վիզ էլ քանչեցի: Էկա, իմ քանակ տվի սան, կանա:

Անգամ էլ դևերու ճիչ հիմացավ:

Ասավ. – Շերեմըժդինան, ես գինա էրազ եմ տեսեր:

Ասաց. – Քու էրազ ի՞նչ ա:

Ասաց. – Դևերու ճիչ Շերեմըժդինանի քուր պըռնե, մինչև քանսուն օր չըթոներ:

Ասի. – Ես էլ եմ տեսեր էրազ:

Ասաց. – Պատմա՛, քու էրազ ի՞նչ ա:

Ասի, թե. — Իմ էրագ էն ա՛ մեկ խավքյ մ'էկավ մըջ քանսուն ճընջըղկուն, քսանի վիզ քանչեց, մընաց քսան:

Քուր ասաց. — Չէղի՞ Շերեմըժդինան ծեռներ հարծըրեր ա, էլեր ա, քու ընգըռքիրու վըզեր քանչեր:

Ասաց. — Չէ՛, էնպես օր ես էնոր ծեռներ կապեր եմ, էն չըկանա ուր ծեռներ հարծըրի:

Վերջ քըռնան, էլա՛, տասի վիզն էլ քանչեցի, էկա գինա կայնա սան իրիս վեր: Քիչ մնաց, դևիրու ճիչ հիշարցավ:

Ասաց. — Շերեմըժդինան, ես էրագ եմ տեսեր:

Ասի՛ պատմի տեսնենք քու էրագ:

Ասաց. — Էրագի մեջ դևիրու ճիչն Շերեմըժդինանի քուր առեր էր, քյեֆ կեներ, քանսուն օրից ետ խորգե՛մ պիտի էղի Շերեմըժդինանին:

Ասի. — Ես եմ էրագ տեսի, դևիրո՛ւ ճիչ:

Ասաց. — Դե՛, պատմա՛՞ քու էրագ ի՞նչ ա:

Ասի. — Իմ էրագն էն ա, օր մեկ խավքյ ինգե քանսուն ճընջըղկի մեջ, եսունի վիզ քանչե, մնացե տասն:

Իմ քուրն ասաց. — Չէղի՞, էն էլեր, քու ընգըռքիրու վըզքեր քանչեր:

Ասավ. — Չէ՛, էնպես եմ էնի կապե, էն չըկառնար ծեռներ հարծըրի, մարթ ըսպանի:

Անգամ մ'էլ քըռնան, էլա, իննի վիզն էլ քանչեցի:

Արուն էկավ դևիրու մեծի տակ:

Դևիրու մեծ հիմացավ, ասաց. — Էսա ի՞նչ ճուր էրեցի իմ տակ:

Ասի. — Էլի՛ վեր, քու ընգըռքիրու հըմենի վիզն էլ քանչեր եմ, սըրեն քյոն ա, էլի՛ քանչեմ:

Էլա՛, ես ու դևիրու մեծ էնտեղ կովանքյ:

Էտա արնի մեջ ոտներ չու՛մ մեր ծընգվեր էղավ արուն: Ես դևիրու մեծ հարթեցի:

Մինչև էնոր գըլիխ կըտրեցի, իմ քուր փախավ:

Ես էլ ինգան քուրոջ հետև, հա էնա տեղ խասիմ, հա էսա տեղ խասիմ, չըխասա, մինչև էկա թավլի տուռ, քուր մտավ թավլեն, աղոթք էրաց, ծի տանցավ:

Եփ օր ես գան, ծի տիսնա, կը գանլիֆնա:

Էն մարթ ու Շերեմըժդիման էլան, գանցին Շերեմըժդիմանի բաղի մեջ: Բաղի մեջ չինարի ծառըմ կեր:

Եփ օր ինոնց աչք ինգանվ էտա ծառ, էտա չինառի ծառ էն-պես թոմըմալ, էտոր թըփեր չորցալ, գյերի տանցալ:

Բաղից տանցան, գանցին:

Մըսաֆըր ասալ. – Ես անգամ մ'էլ տ'երթամ էն բաղ, տեսնամ, թե էն ծառ ընչի՞ էնպես էղալ:

Եփ օր տանցալ, գյընաց, տեսալ ծառ գվարթ, կանաչ, գանրնան ծառ էր:

Տանցալ էկալ, Շերեմըժդիմանին ասալ. – Շերեմըժդիման, էսա չինարի ծառ ընչի՞ էնպես էղալ:

Ասալ. – Մըսաֆըր, ընչի՞ կը խառցընես, տաւ մըսաֆըր չէղիր, ես սիլե՛մ տը տեր քաւ իրիսին, քաւ գյըլիխ թըռըցուցեմ, ամա տաւ մըսաֆըր ես, քյե խաթըր կէնեմ:

Ասաց. – Խընտրեմ, Շերեմըժդիման, տաւ ձիկ ասես:

Ասալ. – Մըսաֆըր, էն ծառն էլ օր կը խառցընես, իմ կնիկն ա:

– Օր քաւ կնիկն ա, ինչպե՞ս էղեր ա ծառ:

Ասալ. – Չի էրկու ձի կեր: Ես օր պըռնեցի ձի մշակ, իմ ծիանք օր խընձ օր վանտ կերթան, ես մեկ օր գանցի շուկի մեջ, մեկ տըղե մ' ասաց. «Էնա Շերեմըժդիման ա, շանպաթ մեկ մշակ կը պըռնա, տաւա կէնա, թե պատճառ՝ էնոր ծիանք չըն լավանա, ամա՛, էնոր պատճառ ուր տնիցն ա, թող ձի պըռնա մշակ, էնի տեսնա, թե ես ինչըխ կը լավացուցեմ էնոր ծիանք»:

Ես էլ էտ տըղեն պըռնեցի, տարա:

Տարա իմ տան մեջ:

Տըղային ասի. – Տաւ կարո՞ղ ես իմ ծիանք լավացուցես:

Ասաց. – Խա՛, ես կարող եմ: Տաւ ձի լես, քաւ ծիանք լավացուցեմ, թե չըլավացուցեմ, հանը չըմ առնե: Քյե մեկ պան ասեմ, չըքըռիսիս:

Ասի. – Տըղա՛, ասա, տիսնանք՝ քաւ ասելն ի՞նչ ա:

Ասաց. – Շերեմըժդիման, գյիչեր քաւ ծիանք կը գան, կը խեծին, կերթան ման գանլու:

Ես էլ ասի. – Շա՛տ լավ, եփ օր կը խեծին, տաւ արի՛, ձի հիմաց տուր:

Չիրիկուն ես քընա, իմ կնիկ էլանվ, քընու ուլինգ էթալ իմ

ականջ, էլնով, գլորնաց: Գանցեր էր, ծին խեծեր էր, գանցեր էր:

Մշակն էլ ուլինգ իմ ակընջեն էխան, ծի ասաց. – էլի՛, քու կնիկ ծին խեծավ, գլորնաց:

Ես էլ էլն, գանցի թնվլեն, գանցի տեսա, օր ծին խեծեր էր, գանցեր էր: Ես էլ ծե՛մ չըխանի, տանցա, էկա տուն, ասի՝ տեսնանք վն՞դն էլ տ՛երթա՛:

Մյուս օր էղա սուք խիվանդ: Հիրիկուն ես շոտ պանկա, կնիկն էլ էլնով, քընու ուլինգ էթնլ իմ ականջ, գլորնաց, ծին խեծավ, մշակ էկավ, ծի հիմացուց: Ես էլ գանցի, մյուս ծին խեծա, գանցի, տեսա, օր գլորնաց, մե հերի՛մ տուռ պայա էղավ: Մըտավ հեր վեր: Հերեն էլ մեկ դև մ՛ էլնով, տոպրակըմ քնր կախեց ծիու գլըլխուց, մտավ ներս: Ես էլ էն տեղ ըսպասեցի:

Վերջ հերեն էլնով իմ կնիկ, ըգծին խեծավ ու քըշեց: Ես էլ գանցի, դևու վիզ կըտրեցի, տըրի իմ խուռջին, հուրուշ ճանխով շոտ գանցի, կընգան հանե՛ծ առի, գլորնացի, մըտա թնվլեն:

Մշակուն էլ ասի. – Եփ օր կնիկ կը գն, տու ծեն չըխանես, պն՞մ չասես:

Ես էկա իմ տեղ քընա, կնիկն էլ իմ հետև էկավ, քընավ:

Դևու գլըլիխ ես տարեր ի, տըրեր ի մառան՝ չամչի ջըվըլի վերեն:

Կնիկ օր էկավ, ծի հիշարցուց, խառցընեց. – Տու շա՞տ խիվանդ ես:

Ես էլա, ասի. – Ես խիվանդ եմ, ծի չամիչ պիտեր:

Կնիկ էլնով, գլորնաց մառան չամիչ պերելու: Եփ օր տեսավ դևու գլըլիխ գո՛ էն տեղ չամչի վերեն, ես էլ հետևուն գանցի, տեսա, օր դևու գլըլիխ վերուցեր, տըրե ծեռներուն:

Ասաց. – Սև առինք, ես նոր էկա դևու մոտեն, էսի վո՞ն ա կըտրեր, պերեր, տըրեր ըստն:

Հն իշկեց, ատըմներ աչկեց, մայան-մայան ճանչըցավ, թե ուր սիրող դևն ա:

Քիչըմ չամիչ իլեց էնոր գոք, ես տանցա, շոտըմ էկա, իմ տեղ պանկա, էն առեց չամիչ, էկավ, իլեց քնսեն, իտիր իմ հանե՛ծ: Ու հիտև էրաց, մտավ:

Ուրն ուր կը մտածա, հեչ չըզրուցեր:

Ես էլ տանցա, ասի. – Ընչի՞ չըս գրուցեր: Դևու գլըլիխ տեսար, ըտոր պատճա՞ռ չըս գրուցեր:

Օր ես ընցկուն ասի, էլձվ, փախավ: Ես միմչև իմ թուր քաշեցի, լարեցի հետև, փախավ, գյընաց իգու մեչ, աղոթք էրաց, էլավ էսպես ծառ: Վերճեն ես էլձ, գացի մեկ հուրուշ գյեղըմ, ծի կնիկ ուզելու: ՄըսաՖըր, ես գացի մեկ տունըմ, ես էլ մըսաՖըր էղա:

Հիրիկուն պերիմ, էտա տան օրթեն իմ տեղ շինեցիմ, էնոնքյն էլ իմ չորս պիւր պառկան:

Ես էլ էտոնց խառցընեցի, ասի. — Ընչի՞ տպես կենեք, իմ չորս պիւր կը պառկեք:

Էն տան մեծ ասավ. — Մեր գյեղ մեկ պա՛՛մ կա: Ամեն օր կը գա, ամեն տընեն մեկ մարթ կառնի, կերթա, էսօր սըրեն մեր տանն ա, մենք էլ քյե էսպես կառնիք մեր մեչ, օր չըգա, քյե տանի, թոխ մե տանի:

Ես էլ էլձ, իմ տեղ շինեցի տըռան հետև, պառկա տըռան հետև:

Գյիշեր մեկ էլ հիմացա, թե մեկ ջաննավարըմ ծի գարկի էնոր հընթըտակ, առի, կերթա:

Միմչև ծի տընեն տուս էխան, ես ինոր ծեռնեն պըռծա, էն փախավ, ես թալեցի, ընոր ծամեր պըռնեցի, ծեռ տարա, խանջալ պիտեր գաներ, բուռաց, ասաց. «Ձի մը՛ գանե, ես կնիկ եմ: Ես էլ էնոր չըգարկի, առա, էկա էտա տուն, կապեցի տան մեչ միմչև առավոտ: Չուր խըլխուն գյեղական էկան, ասին. — էտա ջաննավար տուր տանենք, ըսպանենք, էն մեր գյեղից օրեն մեկ կը տաներ, կուտեր»:

Ես էլ ասի. — Չը՛մ իտար ծե, էսիկ ջաննավար չի, էսիկ կնիկ ա:

Ես էլ առա կնիկն, էկա տուն: ՄըսաՖըր, էտա կնիկ առա, էկա տուն, փըսակեցի վըր ծիկ: ՄըսաՖըր, ապա էն տըղեն ի՛նչ ծիմե էղի ու էսա կընգընից, էրթա ասլան ըսպանա, ասլան էնու ծեռ էնա յարա, ես էնոր թոնեմ գա տո՞ւն:

Վերճեն կասա. — ՄըսաՖըր, գյիտիմ՝ տու ի՛նչ պանի խամար էկած ես, էլի՛ գյընա՛, քիւ կնիկ պաշտպանա, հիսանի կաթ չըկերի, թե ջընս չի:

